

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/57»

ք. Երևան

«16» *Եպր* 2021 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ավտոմեքենաների ընթացիկ նորոգման և սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **մինչև 2526000 (երկու միլիոն հինգ հարյուր քսանվեց հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի (համաձայնագրի) վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով

նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ**, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:<sup>20</sup>

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **1 (մեկ) տոկոսի չափով**։<sup>21</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության **0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով**։

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով**։

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

<sup>21</sup> Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է **Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**  
Երևանի քաղաքապետարան  
ք. Երևան, Արգիշտի փող. 1  
Կենտրոնական գանձապետարան  
ՀՎՀՀ՝ 02593108  
Հ/Հ՝ 900022750369

Է. Կիրակոսյան

(պարտավորություն)  
Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«<<Ֆլեշ Մոտորս>>ՍՊԸ  
Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց 31  
«Արարատրանկ» ԲԲԸ  
Հ/Հ 1510012745550100  
ՀՎՀՀ 00873228

Էլ. Փոստ՝ [tendera@garaj.am](mailto:tendera@garaj.am)

Հեռ./055/ 46 54 56

Ա. Գասպարյան

/ տնօրեն/  
Կ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒՌԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ\*

2/Հ	ԳՆԱՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	փորձելիկական բնութագիրը	2/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը /Միլիւն/	ընդհանուր քանակը	կադրարման	
								հասցեն	ժամկետը
1.	<<Ղոջ Գրանդ Կարավան>>	5011170/9	Նախատեսվում է կատարել հետևյալ ծառայությունները. -Դիմացի կախցի գրանատ -Դիմացի կախցի գնդան ձգաններ -Էլ. Սարքավորումների պահեստամասեր -Դռան ապակու մեխանիզմ -Գեներատորի փոխ -Օդորակիչի փոխ -Դիմացի արգելակման կոճղակներ -Հետեի արգելափակման փոճղակներ - շարժիչի հարակից դետալների փոխարինում նորով - և այլ աշխատանքներ ըստ պահանջի Փախարիկով դետալների, ինչպես նաև շարժիչի և փոխանցման տուփի վերանորոգման համար առնվազն 1 տարվա երաշխիքային սպասարկում:	դրամ	650000	650000	1	Ք. Երևան Գ. Նժդեհի փողոց թիվ 26	Պայմանագրի կնքման 21-րդ օրացույցային օրվանից մինչև 15.12.2021 թ. ներառյալ
2.	<<Ջիլ Գրանդ Շերոկե>>	5011170/10	Նախատեսվում է կատարել հետևյալ ծառայությունները.. -Շարժիչի յուղ -Շարժիչի յուղի ֆիլտր -Ղեկային սյունակի իջուկներ -Հետևի արգելակման կոճղակներ -Դիմացի արգելակման կոճղակներ -Ենթացային պահեստամասեր -Շարժիչի հարակից դետալների փոխարինում նորով - և այլ աշխատանքներ ըստ պահանջի	դրամ	600000	600000	1		

3.	<<Հունդայ Սոնատա>>	5011170/11	<p>Փախարհնվող դետալների, ինչպես նաև շարժիչի և փոխանցման տուփի վերանորոգման համար առնվազն 1 տարվա երաշխեքային սպասարկում:</p> <p>Նախատեսվում է կատարել հետևյալ ծառայությունները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Շարժիչի յուղ</li> <li>- Շարժիչի յուղի ֆիլտր</li> <li>- Արգելակման հեղուկ</li> <li>- ԱՓՏ-ի յուղ</li> <li>- Հետին կամրջակի լծակ</li> <li>- Օդորակիչի պոմպ</li> <li>- Հովացման ռադիատոր</li> <li>- Օդի ֆիլտր</li> <li>- Դիմացի արգելակման կոճղակներ</li> </ul> <p>- շարժիչի հարակից դետալների փոխարինում նորով</p> <ul style="list-style-type: none"> <li>- և այլ աշխատանքներ ըստ պահանջի</li> </ul> <p>Փախարհնվող դետալների, ինչպես նաև շարժիչի և փոխանցման տուփի վերանորոգման համար առնվազն 1 տարվա երաշխեքային սպասարկում:</p>	դրամ	1276000	1276000	1
----	-----------------------	------------	---	------	---------	---------	---

**Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ Ո Ւ**

Երևանի քաղաքապետարան  
 ք. Երևան, Արգիշտի փող. 1  
 Կենտրոնական գանձապետարան  
 ՀՎՀՀ՝ 02593108  
 Հ/Հ՝ 900022750369

Է. Կիրակոսյան .....  
 (ստորագրություն)  
 Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Բ Ո Ղ**

<<Ֆեշ Մոտորս>>ՍՊԸ  
 Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց 31  
 «Արարատբանկ» ԲԲԸ  
 Հ/Հ՝ 1510012745550100

ՀՎՀՀ՝ 00873228  
 Էլ. Փոստ՝ tendera@garat.am  
 Հեռ./055/ 46 54 56



Է. Կիրակոսյան

Հավելված  
«16» *Տարբերակ* 2021 թ.  
ԵՔ-ԳՀԾՁԲ-21/57 ծածկագրով պայմանագրով

		<b>Չափաբաժնի համարը</b>	
Հ/հ	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	1	2
		HYUNDAI SONATA	<<Դոշ Գրանդ Կարավան>>
1	Բռնկման համակարգի ստուգում	անվճար	անվճար
2	Կցորդման համակարգի ստուգում	անվճար	անվճար
3	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	անվճար	անվճար
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	անվճար	անվճար
5	ABS համակարգի ստուգում	անվճար	անվճար
6	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	անվճար	անվճար
7	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	անվճար	անվճար
8	Ընթացային համակարգի աշխատանքի ստուգում	անվճար	անվճար
<b>1.Շարժիչ</b>			
9	Շարժիչի հանում և տեղադրում	60000	50000
10	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	30000	30000
11	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	10000	10000
12	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	50000	50000
13	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով	50000	50000
14	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	10000	10000
15	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	25000	25000
16	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	25000	25000
17	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	10000	10000
18	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	50000	50000
19	Ծնկաձև լիսեռի հղկում	15000	15000
20	Ծնկաձև լիսեռի փոխարինում	50000	50000
21	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	30000	30000
22	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	50000	50000
23	Ծնկաձև լիսեռի ուղղում	50000	50000
24	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	10000	10000
25	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	10000	10000
26	Շարժիչի բլոկի փոխարինում	50000	50000
27	Շարժիչի գլանի փոխարինում 1 հատ	20000	20000
28	Շարժիչի բլոկի հղկում	10000	10000
29	Մխոցի փոխարինում 1 հատ	10000	10000

30	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	50000	50000	50000
31	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	20000	20000	20000
32	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	20000	20000	20000
33	Փոկանիվի փոխարինում	10000	10000	10000
34	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	10000	10000	10000
35	Շարժիչի շղթայի փոխարինում	10000	10000	10000
36	Յուղի մղիչի շղթայի փոխարինում	15000	15000	15000
37	Շարժիչի վանոսների փոխարինում	0	0	0
38	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	15000	15000	15000
39	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	5000	5000	5000
40	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	5000	5000	5000
41	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	5000	5000	5000
42	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	20000	20000	20000
43	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	20000	20000	20000
44	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	20000	20000	20000
45	Շարժիչի յուղի մղիչի կարգավորում	20000	20000	20000
46	Յուղի մղիչի թաթիկի փոխարինում	30000	30000	30000
47	Յուղի ծորակի փոխարինում	1000	1000	1000
48	Օդաքաշակ փողրակի փոխարինում	5000	5000	5000
49	Շարժիչի կոմպրեսորի փոխարինում (տուրբոմղիչ)	0	0	0
50	Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մղիչի փոխարինում	10000	10000	10000
51	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000	5000	6000
52	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
53	Ուղղորդիչ վանոսների փոխարինում	5000	5000	5000
54	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	30000	30000	30000
55	Շարժիչի կափույրի փոխարինում	500	500	500
56	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	500	500	500
57	Մխոցամատի փոխարինում	20000	20000	20000
58	Շարժիչի շարժաթևի փոխարինում	20000	20000	20000
59	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	30000	30000	30000
60	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	20000	20000	20000
61	Ատամնանիվի փոխարինում	20000	20000	20000
62	Ատամնանիվի փոկի փոխարինում	6000	5000	6000
63	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	5000	5000	5000
64	Սուխարիկ փոխարինում	5000	5000	5000
65	Շարժիչի կալունի փոխարինում	5000	5000	5000
66	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	5000	5000	5000
67	Շարժիչի փոկի հողովակի փոխարինում	5000	5000	5000

68	Շարժիչի հողովակի առանցքակալի փոխարինում	5000	5000	5000
69	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	15000	15000	15000
70	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում	5000	5000	5000
71	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	5000	5000	5000
72	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	5000	5000	5000
73	Շարժիչի գամասեղի փոխարինում	5000	5000	5000
74	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	10000	10000	10000
75	Գլխիկի հեղույսի փոխարինում	5000	5000	5000
76	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում	20000	20000	20000
77	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	30000	30000	30000
78	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	10000	10000	10000
<b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>				
79	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2000	2000	2000
80	Ավտոմեքենայի յուղում	2000	2000	2000
81	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	5000	5000	5000
82	Յուղի ռադիատորի փոխարինում	10000	10000	10000
83	Յուղի ռադիատորի նորոգում	20000	20000	20000
84	Յուղի զտիչի փականի փոխարինում	5000	5000	5000
85	Արտածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000	20000	20000
86	Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000	20000	20000
87	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում	10000	10000	10000
88	Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում	10000	10000	10000
89	Վառելիքի փողրակի փոխարինում	5000	5000	5000
90	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	2000	2000	2000
91	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	10000	10000	10000
92	Օդի զտիչի փոխարինում	1000	1000	1000
93	Կոնդիցիոնների զտիչի փոխարինում	1000	1000	1000
94	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
95	Օդի ծախսաչափիչի փողրակի հանում և տեղադրում	10000	10000	10000
96	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	10000	10000	10000
97	Օդաքաշի փողրակի հանում և տեղադրում	10000	10000	10000
98	Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
99	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում 1 կ-տ	10000	10000	10000
100	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	10000	10000	10000
101	Բոցամուղի կողավորում	10000	10000	10000

102	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	10000	10000	10000
103	Բենզամղիչի փոխարինում	5000	5000	5000
104	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	5000	5000	5000
105	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
106	Բռնկման կարգավորում	5000	5000	5000
107	CO կարգավորում	5000	5000	5000
108	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
109	Ղեկավարման բլոկի վերանորոգում	20000	20000	20000
110	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000	20000	20000
111	Վառելիքի բաքի մաքրում	30000	30000	30000
112	Արագարարի ոտնակի փոխարինում	10000	10000	10000
113	Արագարարի ոտնակի տվիչի փոխարինում	10000	10000	10000
114	Օդի ծախսի տվիչի փոխարինում	10000	10000	10000
115	Տրամյորի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
116	Տրամյորի վերանորոգում	10000	10000	10000
117	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	10000	10000	10000
118	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	10000	10000	10000
119	Բենզոբաքի բենզամղիչի ցանցի փոխարինում	20000	20000	20000
120	Բենզոբաքի բենզամղիչի ցանցի մաքրում	20000	20000	20000
121	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	20000	20000	20000
122	Տվիչի փոխարինում	20000	20000	20000
<b>3. Սառեցման և արտածման համակարգ</b>				
123	Հովհարի փոխարինում	3000	3000	3000
124	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000	3000	3000
125	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	15000	15000	15000
126	Ռադիատորի շրջանակի փոխարինում	10000	10000	10000
127	Շերտափեղկի փոխարինում	10000	10000	10000
128	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	10000	10000	10000
129	Ռադիատորի կալունակի փոխարինում	10000	10000	10000
130	Ռադիատորի փողրակի փոխարինում	10000	10000	10000
131	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000	20000	20000
132	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000	20000	20000
133	Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում	10000	10000	10000
134	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում	10000	10000	10000
135	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում	15000	15000	15000
136	Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում	15000	15000	15000
137	Ընդարձակող բաքի փոխարինում	10000	10000	10000
138	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	10000	10000	10000

139	Ջրի ծորակի փոխարինում	5000	5000	5000
140	Հովացման հիդրոկցորդի փոխարինում	5000	5000	5000
141	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	5000	5000	5000
142	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000	20000	20000
143	Հովհարի թևանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000	20000	20000
144	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	20000	20000	20000
145	Վառարանի ռադիատորի նորոգում	20000	20000	20000
146	Վառարանի շարժիչի փոխարինում	15000	15000	15000
147	Թերմոստատի փոխարինում	5000	5000	5000
148	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	5000	5000	5000
149	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	5000	5000	5000
150	Գեներատորի փոկի փոխարինում	5000	5000	5000
151	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	5000	5000	5000
152	Ջրի ռադիատորի վերանորոգում	5000	5000	5000
153	Թերմոստատի միջադիրի փոխարինում	5000	5000	5000
154	Սառեցման համակարգի օդահանում	5000	5000	5000
155	Խլարարի գոֆրայի փոխարինում	20000	20000	20000
156	Կատալիզատորի հանում	20000	20000	20000
157	Խլարարի կատալիզատորի տվիչի փոխարինում	20000	20000	20000
158	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000	20000	20000
159	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	10000	10000	10000
160	Խլարարի անուրի (xамыр) փոխարինում	10000	10000	10000
161	Խլարարի ներդիրի փոխարինում	10000	10000	10000
162	Խլարարի կախոցի փոխարինում	10000	10000	10000
163	Կալունակի փոխարինում	10000	10000	10000
164	Ռեզոնատորի փոխարինում	10000	10000	10000
165	Հովացման հեղուկի փոխարինում	2000	2000	2000
<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>				
166	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
167	Աշխատանքային կամ գլխ. գլանի հիմնական նորոգում ներառյալ աշխատանքները	30000	30000	30000
168	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	10000	10000	10000
169	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
170	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
171	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000

172	Կցորդման երկժանիի փոխարինում	10000	10000	10000
173	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	30000	30000	30000
174	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում	30000	30000	30000
175	ՓՏ-ի փոխարինում	30000	30000	30000
176	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	30000	30000	30000
177	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	30000	30000	30000
178	ՓՏ-ի համաժամիչի փոխարինում	30000	30000	30000
179	ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում	30000	30000	30000
180	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	30000	30000	30000
181	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
182	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	5000	5000	5000
183	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	10000	10000	10000
184	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	10000	10000	10000
185	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	10000	10000	10000
186	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	10000	10000	10000
187	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	10000	10000	10000
188	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի վերանորոգում	10000	10000	10000
189	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	5000	5000	5000
190	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	10000	10000	10000
191	ՓՏ-ի յուղի փոխարինում	5000	5000	5000
192	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	20000	20000	20000
193	ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	200000	200000	200000
194	ԱՓՏ-ի հավաքածուի փոխարինում	50000	50000	50000
195	ԱՓՏ-ի փոխարինում	50000	50000	50000
196	ԱՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	20000	20000	20000
197	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
198	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	20000	20000	20000
199	ԱՓՏ-ի կցորդման գլխավոր զլանի կալունակի փոխարինում	20000	20000	20000
200	ԱՓՏ-ի սլենդերների փոխարինում	20000	20000	20000
201	ԱՓՏ-ի համակարգչի և սլենդերների փոխարինում	30000	30000	30000
202	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում	20000	20000	20000
203	ԱՓՏ-ի յուղի մղիչի խտաբուկերի փոխարինում	20000	20000	20000
204	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում	20000	20000	20000
205	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	20000	20000	20000
206	ԱՓՏ-ի հիդրոագույցի փոխարինում	20000	20000	20000
207	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	10000	10000	10000
208	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	5000	5000	5000

209	ԱՓՏ-ի գտիչի լվացում, մաքրում՝ քարտերի հանում և տեղադրումով	20000	20000	20000
<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>				
210	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	50000	50000	50000
211	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	15000	15000	15000
212	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	20000	20000	20000
213	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	15000	15000	15000
214	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	15000	15000	15000
215	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	15000	15000	15000
216	Բաշխիչ տուփի շարժաբերի փոխարինում	15000	15000	15000
217	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	15000	15000	15000
218	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	15000	15000	15000
219	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	15000	15000	15000
220	Բաշխիչ տուփի երկժանիի փոխարինում	15000	15000	15000
221	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	5000	5000	5000
222	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	5000	5000	5000
223	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	5000	5000	5000
224	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
225	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	5000	5000	5000
226	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	15000	15000	15000
227	Տվիչի փոխարինում	5000	5000	5000
228	Բաշխիչ լիսեռի առամնանիվի փոխարինում	10000	10000	10000
229	Կարդանային լիսեռի միջ. կախցի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
230	Բաշխիչ տուփի շղթայի փոխարինում	10000	10000	10000
<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>				
231	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	60000	60000	60000
232	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր)քանդում, արատավորում և հավաքում	30000	30000	30000
233	Առջևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	8000	8000	8000
234	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	8000	8000	8000
235	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	8000	8000	8000
236	Կամրջակի յուղի փոխարինում	3000	3000	3000
237	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	8000	8000	8000

238	Առջևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	10000	10000	10000
239	Առջևի կամրջակի տվիչի փոխարինում	8000	8000	8000
240	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	20000	20000	20000
241	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000	20000	20000
242	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	30000	30000	30000
243	Հետևի կամրջակի մասնակի քանդում, արատավորում և հավաքում	20000	20000	20000
244	Հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	8000	8000	8000
245	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	8000	8000	8000
246	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուկների փոխարինում	8000	8000	8000
247	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	8000	8000	8000
248	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	10000	10000	10000
249	Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	10000	10000	10000
250	Կամրջակի տվիչի փոխարինում	5000	5000	5000
251	Կամրջակի իրանի փոխարինում (փցսՍՍ)	5000	5000	5000
252	Կամրջակի յուղի փոխարինում	3000	3000	3000
<b>7. Կախոց</b>				
253	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
254	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
255	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5000	5000	5000
256	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
257	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
258	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5000	5000	5000
259	Անվակունդի գամասեղի և հեղյուսի փոխարինում(մեկ անիվի համար)	2000	2000	2000
260	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկների փոխարինում	5000	5000	5000
261	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5000	5000	5000
262	Առջևի զսպանակի փոխարինում	5000	5000	5000
263	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
264	Պնևմոցնցամեղմիչի փոխարինում	5000	5000	5000
265	Պնևմոցնցամեղմիչի բարձիկների փոխարինում	5000	5000	5000
266	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	5000	5000	5000
267	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
268	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	5000	5000	5000

269	Ներքևի լճակի հեղույսի փոխարինում	5000	5000	5000
270	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	5000	5000	5000
271	Անիվների պաշտպանիչի փոխարինում	5000	5000	5000
272	Շարժիչի պաշտպանիչի փոխարինում	5000	5000	5000
273	Վերևի լճակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
274	Վերևի լճակի վռանների փոխարինում 1 հատ	5000	5000	5000
275	Վերևի լճակի հեղույսի փոխարինում	5000	5000	5000
276	Հետևի վերևի լճակի վռանի փոխարինում 1 հատ	5000	5000	5000
277	Գնդե հողակապի պատյանի փոխարինում	5000	5000	5000
278	Գնդե հողակապի փոխարինում	5000	5000	5000
279	Գնդե հողակապի նորոգում	10000	10000	10000
280	Առջևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
281	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	5000	5000	5000
282	Առջևի կայունարարի կալունակի փոխարինում	10000	10000	10000
283	Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում	10000	10000	10000
284	Հետևի կախոցի անվաբացքի կարգավորում	1000	1000	1000
285	Հետևի կայունարարի վռանների փոխարինում 1 հատ	5000	5000	5000
286	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	5000	5000	5000
287	Հետևի կայունարարի կալունակի փոխարինում	5000	5000	5000
288	Հետևի զսպանակների փոխարինում	10000	10000	10000
289	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
290	Հետևի անկյունագծային լճակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
291	Ջսպանի փոխարինում	10000	10000	10000
292	Ջսպանի վռանների փոխարինում 1 հատ	5000	5000	5000
293	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	10000	10000	10000
294	Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	5000	5000	5000
295	Հետևի կախոցի սայլենտ-բլոկի սպասարկում	5000	5000	5000
296	Անկյունագծային լճակի վռանների փոխարինում	5000	5000	5000
<b>8. Ղեկային մեխանիզմ</b>				
297	Ղեկայունակի(USuSվՍՈ) հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	40000	40000	40000
298	Ղեկայունակի(USuSվՍՈ) արորիկի փոխարինում	10000	10000	10000
299	Ղեկայունակի (USuSվՍՈ) առանցքային սոնու փոխարինում	10000	10000	10000
300	Ղեկայունակի(USuSվՍՈ) խաչուկի փոխարինում	10000	10000	10000
301	Ղեկայունակի(USuSվՍՈ) վերանորոգման հավաքածուի փոխարինում	20000	20000	20000
302	Ղեկայունակի(USuSվՍՈ) քանդում, արատավորում, հավաքում	20000	20000	20000
303	Ղեկայունակի(USuSվՍՈ) կարգավորում	10000	10000	10000

304	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	5000	5000	5000
305	Ղեկային մեխանիզմի ժապավենի փոխարինում	5000	5000	5000
306	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածուի փոխարինում	5000	5000	5000
307	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածուի նորոգում	5000	5000	5000
308	Ղեկասյունակի պատյանի փոխարինում	10000	10000	10000
309	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	10000	10000	10000
310	Ղեկային մեխանիզմի փականքի և հակաառևանգման մեխանիզմի փոխարինում	20000	20000	20000
311	Ղեկային մեխանիզմի ղեկասյունակի ամրացման անուրի փոխարինում	10000	10000	10000
312	Ղեկային ծողի առանցքակալի փոխարինում	10000	10000	10000
313	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	10000	10000	10000
314	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	10000	10000	10000
315	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում	10000	10000	10000
316	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000	3000	3000
317	Ղեկի էլեկտրական կարգավորիչի փոխարինում	3000	3000	3000
318	Ղեկային ճոճանակի նորոգման լրակազմի փոխարինում	10000	10000	10000
319	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
320	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	10000	10000	10000
321	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	20000	20000	20000
322	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
323	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	10000	10000	10000
324	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	10000	10000	10000
325	Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածուի փոխարինում	20000	20000	20000
326	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
327	Ղեկային ծողի գնդե հողակալի նորոգում	10000	10000	10000
328	Ղեկային ձգածողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
329	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
330	Ղեկային ձգածողի ծայրակալների փոխարինում	5000	5000	5000
331	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	5000	5000	5000
<b>9. Արգելակային համակարգ</b>				
332	Վակումային ուժեղարարի փոխարինում	20000	20000	20000
333	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	5000	5000	5000

334	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
335	Գլխ. գլանի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	20000	20000	20000
336	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
337	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	20000	20000	20000
338	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
339	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
340	Առջևի սուպպորտի վերանորոգում	5000	5000	5000
341	Հետևի սուպպորտի վերանորոգում	5000	5000	5000
342	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	10000	10000	10000
343	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	10000	10000	10000
344	Արգելակային փողրակի փոխարինում	10000	10000	10000
345	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	5000	5000	5000
346	Արգելակային համակարգի օդահանում	2000	2000	2000
347	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	2000	2000	2000
348	Հետևի թմբուկային կոճղակների փոխարինում	2000	2000	2000
349	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4000	4000	4000
350	Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	5000	5000	5000
351	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում 1 հատ	5000	5000	5000
352	Հետևի արգելակային սկավառակի հղկում 1 հատ	5000	5000	5000
353	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000	3000	3000
354	ABS-ի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000	3000	3000
355	ABS-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	10000	10000	10000
356	ABS-ի տվիչի փոխարինում	5000	5000	5000
357	ABS-ի էլեկտրական հաղորդալարերի փոխարինում	2000	2000	2000
358	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
359	Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	10000	10000	10000
360	Ձեռքի արգելակի կոճղակների փոխարինում	5000	5000	5000
361	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
362	Ձեռքի արգելակի ճոպանի վերանորոգում	10000	10000	10000
363	Հետևի արգելակների կարգավորում	3000	3000	3000
364	Արգելակային համակարգի լվացում	3000	3000	3000
365	Արգելակային հեղուկի փոխարինում	3000	3000	3000
<b>10. Էլեկտրասարքավորում</b>				

366	Գեներատորի հանում, տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
367	Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում	5000	5000	5000
368	Գեներատորի ստատորի փոխարինում	5000	5000	5000
369	Գեներատորի ռոտորի փոխարինում	5000	5000	5000
370	Գեներատորի լիցքավորման ռելեի փոխարինում	3000	3000	3000
371	Գեներատորի դիոդային կամրջակի փոխարինում	1000	1000	1000
372	Գեներատորի առանցքակալի փոխարինում	5000	5000	5000
373	Գեներատորի փոկանիվի փոխարինում	2000	2000	2000
374	Հագոցի հարվածամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
375	Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում	7000	7000	7000
376	Մեկնարկիչի խարխուխի փոխարինում	5000	5000	5000
377	Մեկնարկիչի իրանի փոխարինում	5000	5000	5000
378	Մեկնարկիչի բռնիչի փոխարինում	3000	3000	3000
379	Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում	3000	3000	3000
380	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	3000	3000	3000
381	Մեկնարկիչի հետևի կափույրի փոխարինում	3000	3000	3000
382	Մեկնարկիչի ռելեի փոխարինում	3000	3000	3000
383	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	2000	2000	2000
384	Մեկնարկիչի պատյանի փոխարինում	3000	3000	3000
385	Ազդանշանի կարգավորում	2000	2000	2000
386	Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	2000	2000
387	Առջևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	2000	2000
388	Հակամշուշային լապտերի տեղադրում	1000	1000	1000
389	Լապտերի կենտրոնական փոխակերպիչի փոխարինում	1000	1000	1000
390	Սարքերի պանելի հանում և տեղադրում	1000	1000	1000
391	Հետևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000	1000	1000
392	Առջևի լապտերների կարգավորում	1000	1000	1000
393	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	1000	1000	1000
394	Բռնկման կողպեքի հպակի փոխարինում	1000	1000	1000
395	Վառոցքի կոճի հանում և տեղադրում	1000	1000	1000
396	Ինդուկցիոն կոճի հանում և տեղադրում	1000	1000	1000
397	Լուսամփոփի լարերի փոխարինում	1000	1000	1000
398	Լուսամփոփի լարերի նորոգում	2000	2000	2000
399	Վազբաչափի փոխարինում	10000	10000	10000
400	Վազբաչափի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
401	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	5000	5000	5000
402	Ապակեվազիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
403	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000

404	Ջեռուցիչի շարժիչի փոխարինում	5000	5000	5000
405	Ջեռուցիչի օդի հոսքի կարգավորիչների փոխարինում	5000	5000	5000
406	Ջեռուցիչի օդի հոսքի կարգավորիչների նորոգում	10000	10000	10000
407	Ապահովիչների փոխարինում	1000	1000	1000
408	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	10000	10000	10000
409	Դռների էլ/փականի փոխարինում	10000	10000	10000
410	Ապակեամբարձիչի փոխարինում	10000	10000	10000
411	Ապակեամբարձիչի շարժիչի փոխարինում	10000	10000	10000
412	Մազնիտոլայի տեղադրում	10000	10000	10000
413	Էլեկտրական տվիչների փոխարինում	3000	3000	3000
414	Էլեկտրական անջատիչների փոխարինում	3000	3000	3000
415	Մարտկոցի փոխարինում	2000	2000	2000
416	Մարտկոցի կլեյմաների փոխարինում	2000	2000	2000
417	Ակումյատորի դրական էլեկտրոլարի փոխարինում	1000	1000	1000
418	Ակումյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում	1000	1000	1000
419	Պարկտրոնիկի տեղադրում	10000	10000	10000
420	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	2000	2000	2000
421	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի փոխարինում կամ նորոգում	20000	20000	20000
422	Առջևի կամրջակի վակուումային շարժիչի փոխարինում	10000	10000	10000
423	Բաժանարար տուփի վակուումային շարժիչի փոխարինում	10000	10000	10000
424	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի փոխարինում կամ նորոգում	10000	10000	10000
425	Ավտոմեքենայի ալեհավաքի փոխարինում	5000	5000	5000
426	Ավտոմեքենայի ալեհավաքի նորոգում	10000	10000	10000
427	Էլ/ կոճակի փոխարինում	3000	3000	3000
428	Փոխանջատիչ ղեկի փոխարինում	3000	3000	3000
429	Քսենոնի բլոկի փոխարինում	3000	3000	3000
430	Էլեկտրական շտեյլերի փոխարինում	1000	1000	1000
431	Էլեկտրական անջատիչի փոխարինում	1000	1000	1000
432	Վառոցքի լարերի խրճի փոխարինում	1000	1000	1000
433	Ջրի ցողիչի փոխարինում	3000	3000	3000
434	Բեռնախցիկի հարվածամեղմիչի փոխարինում	3000	3000	3000
435	Բամպերի փոխարինում	10000	10000	10000
436	Բամպերի կալունակի փոխարինում	10000	10000	10000
437	Բամպերի բալկայի փոխարինում	10000	10000	10000
438	Բամպերի պենոպլաստի փոխարինում	10000	10000	10000
439	Բեռնախցիկի փոխարինում	10000	10000	10000
440	Բեռնախցիկի նորոգում	10000	10000	10000
441	Բեռնախցիկի փականի փոխարինում	5000	5000	5000
442	Բեռնախցիկի ռետինի փոխարինում	5000	5000	5000

443	Դռան պաստառի փոխարինում	3000	3000	3000
444	Հագոցի փականի փոխարինում	3000	3000	3000
<b>11. Ավտոմեքենայի սրահ</b>				
445	Տաքացուցչի ղեկավարման բլոկի հանում, տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
446	Տաքացուցիչ ռադիատորի հանում, տեղադրում կամ փոխարինում	10000	10000	10000
447	Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
